Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի - 2024 թ.

10-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Ահեղամռուն- Աղստևի թավ անտառներով հարուստ ա-ափնյակին լեռների գո-ում ջրար-ի կանաչազարդության մեջ ան-ստգյուտ դ-խուհու պես բազմած է զմրու-տաշող մի քաղաք Դիլիջանը: Սա նրա նորաթուխ անունն է: Դեռևս վաղ-նջական ժամանակներից այդ բնակավայրի անունը *Հովք* էր այսօր այդ անունը կրում է միայն ձորահովիտը գոտ-որող սիգապան- լեռնաշղթայի երկնահու- գագաթը որ վրդո-ած նայելով սյու-ի հետ ծե-ծե-ող քաղաքին զարմանում է մարդիկ ինչպես մոռացան հինավուր-ու գո-տրիկ այդ անունը:

Ասում են՝ տասնյոթերորդ դարի վերջին եվրոպացի երկու քարոզիչներ գալիս են Հայաստան՝ կաթոլիկություն տարածելու, և զմայլված Հովքի ա-բասիր օդով, հու-թի բնությամբ՝ հանգրվանում են դաղ-ի, սուսա-բարի ու գինարբու-ների խր-երով ակա-ձուն հովտում, որի հոգեպարար անդո-ը երբեմն խա-տվում էր դեղ-անիկների ախո-ժալուր դայլայլներով: Հենց այստեղ էլ կառուցում են տեղաբնակներին խիստ անհեթ-եթ թվացող և նույնքան տարօրինակ անվանումով իրենց կացարանը՝ *դիլիժանսը,* որը նման էր մեծ հանրակառքի:

Պատմում են նաև, որ իրենց վարդապետությունը տարածելուց զատ՝ կաթոլիկ այրերը ամո-ել են նաև հիվանդներին առողջարար խոտաբույսերով ու արմտի-ով:

Աղստևի հայերը, իհարկե, կաթոլիկ չդարձան, բայց *դիլիժանս, դիլիժանս* ասելով՝ տոհմիկ Հովքը վերանվանեցին Դիլիջան:

1. Էրացրո՛ւ տեքստի բառերում բաց թողնված տառերը: (3 միավոր)
2. Տեքստից դուրս գրի՛ր տրված բառերի հոմանիշները՝ *պչրել, արտառոց, ուսմունք, ապաքինել, ճովողյուն, թագուհի, խրոխտ, ալեհույզ, ականակիտ, փարթամ, դարավանդ, լիքը, նորաստեղծ, տրցակ, աննման* բառերի հոմանիշները: (3 միավոր)
3. Տեքստից ընտրի՛ր տրված կաղապարներին համապատասխանող մեկական բառ.

(1 միավոր) արմատ+ հոդակապ + արմատ + ածանց
արմատ + ածանց + հոդակապ + արմատ + ածանց
արմատ + ածանց + ածանց
արմատ + արմատ + ածանց
ածանց + արմատ + ածանց

4. Կետադրի՛ր բնագրի առաջին պարբերությունը: (2 միավոր)
5. Տրված բառերն արտահայտի՛ր հոմանիշ դարձվածքներով. *անվանարկել, լռեցնել, լռել, հասկացնել, ընչաքաղց*: (2 միավոր)
6. Գրի՛ր *հերկել, ծխել, ոստան, թոթվել, հետևորդ* բառերի հարանունները՝ յուրաքանչյուրի կողքին նշելով նրանց արտահայտած իմաստները: (2 միավոր)
7. Փակագծերը հանելով՝ գրի՛ր անջատ, միասին կամ գծիկով. տարեց(տարի), գնալ(հասնել), բառ(գրքույկ),ալ(կարմիր), մեկ(մեկու), բժիշկ(հոգեբան), հինգից(վեց), հյուսիս(արևելյան), լույս(ընծայում), կազմ(պատրաստ): (1 միավոր)
8. Գրի՛ր շարադրություն «Իմ տունն իմ անառիկ ամրոցն է» վերնագրով(երկու էջի սահմաններում): (6 միավոր)